



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ**
ՆԱԽԱՐԱՐ»

Ն. Գրամաշ Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«21» 07 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 66

Ձեռնարկողը՝

«Տաթևիկ-3» ՍՊԸ

«**Արագածուրնի մարզ, գ. Ներքին Բազմաբերդ**»

Գործունեությունը՝

Կաքավածորի փուֆի հանքավայրի Ներքին Բազմաբերդի փեղամասի փարածքում 2017-2018թթ երկրաբանական ուսումնասիրության աշխարանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«**Արագածուրնի մարզ**»

«**Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն**» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Սահակյան
Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 66

«21» 07 2017թ.

**«Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Ներքին
Բազմաբերդի տեղամասի տարածքում 2017-2018թթ. երկրաբանական
ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ»**

Ձեռնարկող՝

«Տաթևիկ-3» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ, կից
փաստաթղթեր
/Գ կատեգորիա/

«Տաթևիկ-3» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ծրագրով նախատեսվում է «Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Ներքին Բազմաբերդի տեղամասում կատարել երկրաբանահետախուզական աշխատանքների:

Կաքավաձորի տուֆի հանքավայրի Ներքին Բազմաբերդի տեղամասը գտնվում է «Արագածոտնի մարզի տարածքում՝ Ներքին Բազմաբերդ համայնքի վարչական տարածքում: Տեղամասը տեղակայված է գյուղից 6.5կմ դեպի հարավ, իսկ Թալին քաղաքից՝ 22կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 4.0հա տարածք՝ Արագած լեռան հարավ-արևմտյան լանջի 1170-1185մ բարձրությունների վրա:

Նախատեսվում է երկրաբանահետախուզական աշխատանքներով ուսումնասիրել և արդյունաբերական կարգերով հաշվարկել տուֆերի պաշարները: Տուֆերի որակական հատկանիշները պետք է բավարարեն «Պատքարեր լեռնային ապարներից» 4001-91 ԳՈՍՏ-ին և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՀՍ-ին համապատասխան վերջնարտադրանքի ստացումով:

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

- հյուսիսային լայնություն՝ 40° 16' 36",
- արևելյան երկարություն՝ 44° 01' 10":

Աշխատանքների տեղամասը գտնվում է բարենպաստ ճանապարհա-տրանսպորտային պայմաններում: Հյուսիսային մասով անցնում է Երևան-Գյումրի ավտոմայրուղին, որի հետ կապվում է 2կմ գրունտային, ապա մոտ 6կմ ասֆալտապատ ավտոճանապարհով:

Տարածքը ներկայացվում է որպես անտառազուրկ լեռնային շրջան, բնորոշ բույսին ռելիեֆով և սակավ խոտաբուսականությամբ:

Ազատուհան Երևան
ԳԵԲ

Շրջանի կլիման չոր ցամաքային է: Առավելագույն ջերմաստիճանը կարող է հասնել $+34^{\circ}\text{C}$, իսկ նվազագույնը՝ մինչև -25°C : Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 450մմ սահմանը:

Ներքին Բազմաբերդի տեղամասի բնական ջրային ցանցը թույլ է զարգացած ապարների բարձր ջրաթափանցելիության և տեղումների սակավության հետևանքով: Այն հիմնականում ներկայացված է սելավային հոսքերի հեղեղատներով, որոնք ունեն սեզոնային բնույթ: Տեղամասից մոտ 1.5կմ դեպի հյուսիս անցնում է Արզնի- Շամիրամ ջրանցքը, որը բաց տեսակի ջրատար է:

Տարածքի հողային ծածկույթը ներկայացված բաց շագանակագույն, գորշ կիսաանապատային հողերով: Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ(70.3%), էրոզացված հողերը:

Երևակման տարածքին բնորոշ են կիսաանապատային և լեռնատափաստանային լանդշաֆտները՝ հացազգի և տարախոտա-հացազգի բուսականությամբ: Բուսական համակեցություններում զգալի մաս են կազմում վաղամեռ, ճիմ առաջացնող հացազգիները:

Շրջանի կենդանական աշխարհի ներկայացուցիչներից են ճագարամուկը, նապաստակը, աղվեսը, գայլը, մողեսները, օձերը:

Ուսումնասիրության համար նախատեսված տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել:

Տեղամասի շրջանում հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունն է և գյուղատնտեսությունը: Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Երևակման շրջանի երկրաբանական կառուցվածքի, տեղանքի մերկացումների նախնական ուսումնասիրության տվյալների վերլուծության արդյունքները թույլ են տալիս տարածքը հետազոտել 6 հորատանցքերի(15-20մ խորությամբ), փորձաքննական բացահանքի և դրանց համապատասխան նմուշարկման միջոցով: Օգտագործվելու են նաև տարածքի արևմտյան մասով անցնող սելավատարի լանջերի 2 մերկացումների տվյալները: Հորատանցքերը հորատվելու են երկրաբանահետախուզական աշխատանքների համար հատկացված տարածքի 4 եզրակետերում և 2-ը՝ ձգված եզրագծերի վրա:

Հետախուզացանցի խտության ընտրությունը կատարվել է ելնելով հանքերևակման երկրաբանական կառուցվածքից, որն ըստ բարդության պատկանում է առաջին խմբին: Ա կարգի պաշարների եզրագծման համար հետախուզական փորվածքների միջև եղած հեռավորությունը կազմում է 100-180մ: Հորատումը կկատարվի սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով, կարծր համաձուլվածքային (112-93մմ տրամագծով) թագիկներով: Հորատահանուկի նվազագույն ելքը օգտակար հաստվածքից նախատեսված է 80%: Հորատման ընդհանուր խորությունը կկազմի 100գծ.մ:

Նախատեսված հորատումը կկատարվի ՄԲ-2.5A տիպի ինքնագնաց հորատող հաստոցով:

Հետախուզական մակերեսային լեռնային փորվածքները անց են կացվելու օգտակար հանածոյի մարմնի եզրագծման և նմուշարկման նպատակով: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել ձեռքով՝ առանց պայթուցիկ նյութերի օգտագործման:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատահանուկի նմուշարկում(սեկցիայի երկարությունը մինչև 5-6մ)՝ 15 նմուշ,
- երկուական մեքենաների վերցնում բացահանքից և բնական մերկացումներից՝ 6 մենաքար,



- տուֆերի քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 3 ակոսային նմուշ:

Բացահանքի փորձաքննական հանույթի ընդհանուր ծավալը կկազմի շուրջ 500մ³, որի կոնկրետ տեղադիրքը կճշտվի կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներով:

Հանքերևակման տարածքում կատարվելու է նաև 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ՝ լեռնային փորվածքների, մերկացումների, փորձաքննական հանույթի և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ: Տոպոհիմքի վրա կազմվելու է նույն մասշտաբի հանքավայրի երկրաբանական քարտեզ՝ իր կտրվածքներով:

Աշխատանքների փոքր ծավալներից ելնելով, փոշու և վնասակար գազերի արտանետումները չեն գերազանցի սահմանային թույլատրելի չափաքանակները:

Երևակման տարածքի տուֆերի ռադիոակտիվությունը որոշելու համար նախատեսվում է ստուգել ռադիոնուկլիդների կոնցենտրացիան, որը կատարվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից պայմանագրային հիմունքներով: Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո, նախատեսվում է կազմել հանքավայրի արդյունաբերական յուրացման նպատակահարմարության մասին տեխնիկատնտեսական հիմնավորում:

Տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման հերթականությունը հետևյալն է.

- Կաքավաձորի տուֆի հանքավայրի Ներքին Բազմաբերդի տեղամասի շրջանի վերաբերյալ ֆոնդային և հրատարակված նյութերի ամփոփում,
- տոպո-մարկշեյդերական աշխատանքների իրականացում,
- երկրաբանական քարտեզագրման աշխատանքների իրականացում,
- մակերեսային լեռնային փորվածքների անցում և նմուշարկում ,
- հորատանցքերի հորատում և նմուշարկում,
- լաբորատոր տեխնոլոգիական նմուշների վերցնում և հետազոտում,
- տեղամասի հնարավոր արդյունաբերական նշանակության վերաբերյալ տեխնիկատնտեսական նկատառումների կազմում:

Աշխատանքների կատարման համար ընտրված ժամանակահատվածը լինելու է.

- սկիզբը՝ 2017թ. III եռամսյակ,
- ավարտը՝ 2018թ. II եռամսյակ:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Ռեգիոնալ բնույթի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է:

Մակերեսային լեռնային փորվածքների անցման և հորատման հարթակների կառուցման ժամանակ հնարավոր է որոշակի ազդեցություն հողերի վրա: Փորվածքների, ճանապարհների անցման ժամանակ նախատեսվում է կատարել հողի բերրի շերտի հանում և պահպանում հատուկ առանձնացված վայրում՝ հետագա ռեկուլտիվացիայի համար, որի համար նախատեսված է մասնահանել 150 հազար դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման/ նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին կտրվի

համապատասխան թեքություն՝ ապահովելով թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման նպատակով,
- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրում,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որոնք հետագայում դատարկվում են հատուկ ծառայության ուժերով,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 100.0 հազար դրամ:

Եզրահանգումներ Ներկայացված մի շարք բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու իրականացվող աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ (կազմվել են նաև վերջիններիս արձանագրությունները), որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Տաթևիկ-3» ՍՊ ընկերության կողմից ներկայացված «Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Ներքին Բազմաբերդի տեղամասի տարածքում 2017-2018թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների» շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝



Ն. Ռոստոմյան